

ԱՆՁՈՒ ՏԻՐ ԾԱՇԽԱԿԱՐԱ

ՏԱՐԱՎԱՐԻ


ԼԱՐԵՐ

Ա. անուրադ

Թ. Բ. Ֆ. Լ. Ա. Ս.

Խ. ՕՐ. Ն. Աղանեանցի, Պոլից. Հ.

1911



1911թ. 25 Հոկտեմբեր
Ա. Աղաջանյան Տէր-Յովհաննես - ից
Ա. Աղաջանյան Ա. Աղաջանյան Տէր-Յովհաննես - ից
56 NOV 2011

891.99

5-44

Ա. ✓

ՏԱՆՉԱՆՔԻ =

— — — — —
ԼԱՐԵՐ

1001
ՀԱՐԴ

Ա. տեսրակ

— → ← —

Թ ի Ֆ Լ ի Ս
Էլեքտրատեղաբան Օր. Ն. Աղաջանյան, Պուլից. 7
1911

20.08.2009
ՏԱՐԱԾՈՒՅԹ

5841+

ՏԱՆՃԱՆՔԻ ԵԱՐԵՐ

Ե Բ Գ Բ

Մի երգ էր հնչուոմ բարձր, բարձր:
Լուս էր, որպէս երազի ժամին:
Երգի ձայնն էր գալիս միայն, ալիքները թռչում էին ամեն կողմ:

Լսում էի:

Զայնը եկաւ, եկաւ ու դիպաւ սրտիս:
Սիրտս ճմլւեց, հառաչեց:

Անցեալիր յիշողութեան երգն էր այն:
Յուշերի ձայնը կպաւ սրտիս:

Սիրտս զարթեց, յիշեց ու հառաչեց:
Լսում էր երգը:

Ալիքները տարածւում էին ամեն կողմ:
Մէկը եկաւ ուժգին և հարւածեց կըրծքիս:

Զոր, կմաղքացած կուրծքս կարծես պայթեց:

Ու գուրս թռաւ սիրտս, տարիներ շարունակ վիրաւոր սիրտս արիւնոտւած,
թռաւ գէպի երգը:

Գնաց փնտոելու անցեալը, յիշողութեան
երգը, գնաց նստելու անցեալի աւերակնե-
րի վրայ ու ողբալու:

Անցեալի՛ յիշողութեան երգը...

Ինչպէս քաղցր և ինչպէս դառն է նա:

ՄԱՀՈՒԱՆ ԺԱՄԸ

Սհմա, սհմա:

Թամի է, կատաղի քամի ու ճոճում է
ամեն ինչ:

Ծառերը հառաչում են ու նրանց ձայ-
նակցում է բուն:

Թոչունները լոել են ու վախից զողում
են: Մէկը թագնուել է պատուհանի անկիւ-
նում ու սարսափած նայում է ծառին:

Այստեղ նրա բունն է: Ծառը ճարճատ-
ռում է, արմատները պոկւում են:

Սարսափելի է:

Կուրծքը սեղմում է ու սիրոը հառա-
չում:

Օդում խշոցի ու թափահարման ձայն է
լսում:

Նա նայում է:

Իջնում է հանգարտ, սպիտակ շրջա-
զգեստը ծածանելով մի կին:

Քամին սուլում է, ծառերը շառաչում
են, բուերը ձայնակցում նրանց ու բոլորը
միասին կրկնում են.

«Մահը, մահը, մահը...»:

Մահը, մահւան ժամը:

Ու կծկում է ամեն ինչ, սիրոը, սիր-
ուր...

Օ՛, սարսափելի է, սարսափելի...

Մահուան ժամը...

ԼԻ ՃԸ

Խաղաղ է լիճը իրիկւան պահուն, երբ
հանգստութեան ողին է սաւառնում օդում
և չորս կողմի լսութեան մէջ միայն թեթև
զեփիւն է զբնում անուշ ու իր փափուկ
մատներով շփում է լճի զեղեցիկ, վերջա-
լոյսի վերջին, մարող ճաճանչ փայլիլող
դէմքը, փոքրիկ օղակներ կազմելով, որոնք
կամաց-կամաց օրօրուում ու անյետանում
են անձայն, որպէս քաղցրիկ համբոյրի
քնքուշ հետքերը...

Սքանչելի է լիճը երեկոյեան խաղաղ
ժամին, երբ մանրիկ ձկներն են խաղում
գրկումը, երբ ափում ծաղիկներն են անուշ
բուրում ու գոյն-գոյն թերթերից փնջեր են

կազմում սիրող զոյգերի կրծքերի համար:
Իսկ ուսիները կորացած մէջքով նայում են
լին մէջ, փնտուելով այնտեղ իրենց պահ
տւած դառն արցունքները:

Ցաւի ու տառապանքի կնիքն ինձ վրայ,
լացող ուրիշներին յենւած, մտածութիւններից
ծանրացած գլուխս կրծքիս եմ խոնարհել:

Մենակ, հալածւած՝ կեանքն ինձ ատելի,
որոնումի ետից ընկած, եկայ ևս այս-
տեղ ու յոդնած՝ թմրեցի տանջանքի ծանր
բեռների տակ:

Եւ կարծես լսում եմ, որ մէկն ինձ կան-
չում է իր քնքուշ ձայնով.

— Եկ իմ գիրկը, այստեղ հանդիստ է...

Այդ լիճն է, որ պարզած գէպի ինձ իր՝
երեկոյեան վերջալոյսով օծւած մանրիկ ա-
լիքները, մեղմ շնչում է.

— Եկ իմ գիրկը, Եկ...

Լիճը, լիճն ինձ կանչում է...

ԱՆՄԵՌ ԿԲ ՄՆԱՅ

Մտամոլոր ու յուսաբեկ մտածութիւնների
անխուսափելի ծանրութեան տակ շրջում
էի, երբ անցար դու:

Վշտի անհունը ընդպրկած խորունկ հայ-

հացքիդ մէջ, ձնշումի անձուկ քողով պա-
րուրած, անցար դու յաւիտեան, այն ժա-
մանակ, երբ միւսները ապրում, նետում
էին կեանքի ձահձի մէջ, երջանիկ համարե-
լով իրենց ու անզուսպ հոհուալով քո ետե-
ւից:

Դու անցար, բայց քո օվեղէն, անձհ-
ուազործ ու միւայն մտքի անընաբարելի
թոփչքով գծւած պատկերը մնաց իմ տոաջ
և տպեկց հոգում:

Հոգիս, որ իր բիւր ծալքերում անթիւ
գաղանիքներ ունի, որոնք օտար են մար-
դոց, գէն հրեց ամեն ինչ ու ընդպրկեց
միւայն քո պատկերը:

Եւ այն անմեռ կըմնայ այնտեղ, որպէս
այն փունջ ծաղիկները, որը դու քո անց-
նելու ժամանակ ինձ տւեցիր, որպէս յի-
շատակ գարնան առաջին ցօղով ծածկւած
քո սրտի:

Քո պատկերը անմեռ կըմնայ իմ հոգում,
որպէս այն ծաղիկները, որոնք ուռմանում
են կրծքիս վրայ, և որպէս քո քնքուշ մարմ-
նից բուրող ջերմութիւնը՝ ինկարկում են
ինձ...

ԳԵՐԵԶՄԱՆԱՏԱՆԻ

Գիտէք ինչ է կէս գիշերին լինել գերեզմանատանը, չոգել մի նոր, թարմ հողակոյափ վրայ և արտասւել անզուսպ... աննշան դամբարանում հանգած ձեր սրաի մօտիկ անձնաւորութեանը սգալ... Գիտէք ինչ է ձեր սիրած, պաշտած, ձեր կեանքը կազմող տաք, շատ տաք, սրաի, անհուն ծով, յաւետենական կեանք կազմող լուսափայլ աչերի ու չքնաղ, պաշտող հոգու մշտական, անդառնալի կորուստը...

Ոչ, ոչ, գուք չըգիտէք, չէք զգացել այդ անսահման, անյատակ ցաւի ծանրութիւնը, ես գիտեմ, գիտեմ, ես զգացել եմ...

Պլւած հողակոյտին, ջանացէլ էք արգեօք քանդել, քանդել այն, գուրս քաշել նրան, նրան՝ որի շունչը, որի հայեացքը ձեր կեանքն է և կեանք տալ, շունչ փչել ու նորից փարւել նրան, զգալ ձեռքի քընքուշ փայփայանքը, չքնաղ այտերի հպումը դէմքիդ...

Եւ անզօրութեանդ համար բարկանում ես, պոռթքում է սիրադ և անէծքի սարսափելի շարքը գուրս է ժայթքում բռնկւած հոգուցդ ու թռչում, տարածւում շուրջգ:

Մենակը... մեռնել այդպէս, դեռ կեանք ըլտեսած:

Ու որքան ես կամեցել թերե ունենալ, կամ չէքիաթային հերոսների նման որևէ կախարդական միջոցով թռչել վեր, այնտեղ, ուր Նա է ու ընկնել առաջը, խընդրել աղաչել, որ կրկին կեանք տայ նրան, կամ վրէժի անզուսպ կատաղութեամբ լըցւած, յագեցնես պապակած հոգուդ ծարաւը:

Աչքերիդ սպիտակուցները սկսում են փայլել, յուզմունքից, զայրոյթից ողջ մարմնով սկսում ես դողալ, ոտքերով գետինն ես դոփում, մատներով՝ հողաթումքը չանգուսում:

Եւ ուժասպառ՝ կրկին ընկնում, փաթաթւում թմրին, թափում ես արցունքներիդ վերջին կաթիլները, հեկեկում, հեկեկում ու մնում երկար...

Ու թռում է, թէ հարիւրաւոր քարեր շարժւում է, նրանց տակերից գուրս են ելնում մեռեալները, ուրւականների նման ժողովում են շուրջգ, քաշքշում շորերից, հոհուում ու հրաւիրում մնալ, մշտապէս իրենց մօտ մնալ:

Սարսուոը պատում է քեզ, քրտինքը ծածկում ոտքերիցդ մինչև զլուխ, ջանք ես

անում փախչելու, բայց մեխւած մնում ևս
կանգնած ե... ցանկանում ես ընդունել ա-
ռաջարկը:

Մնալ այստեղ, նրանց մօտ ու յաւիտե-
նապէս նրա հետ լինել...

Ու թւում է արգէն մնուած ես, զու էլ
ուրւականի նման շարժւում ես նրանց մօտ
ու լսում կեանքից հեռացած այդ մարդոց
պատմութիւնները:

Մարդոց՝ որոնք այստեղ՝ քարերի տակ,
հողի մէջ իրենց աւելի երջանիկ են զգում:

Եւ ինչպիսի պատմութիւններ ունին,
ի՞նչպիսի...

Ահա շարժւել է սկսում և այն նոր,
թարմ հողաթումքը ու նա գուրս է գալիս..
Վաղում, փարում ես վզով, նորից զգում
հայեացքի թափը...

Ու մենանում էք միւսներից, կրկին ըզ-
գում կորցրած համարած սքանչելի երջան-
կութիւնը:

Յանկարծ երեսդ մի ինչ որ բան սկսում
է այրել: Կամացուկ բաց ես անում աչքերդ:

Սրեգակն է, որ վաղուց տաքացրել է
երկինք, երկիր, լիս ու դաշտ:

Վեր ես ցատկում տեղից, շարժւում ես:

Դու կրկին ապրում ես, սիրադ կրկին
բարախում է...

Դու կրկին ապրում ես, սիրադ կրկին
բարախում է...

Դու ապրում ես, իսկ նա... նա պառ-
կած է անշուք հողաթմբի տակ:

ՄԻՐԾ ԻՄ

Անդառնալի պատկերները կրկին վե-
րածնում են անցեալի մշուշի մէջ աւելի
գրաւիչ, խորունկ և սկսում են պատմել
կեանքի քաղցրիկ, անվերջ հէքիաթներ:

Բայց սիրա իմ, ինչո՞ւ յուզման մըրիկը
կամաց-կամաց մօտենում է քեզ ու ձգտում
ես դէպի այն հէքիաթները:

Ո՞չ, քեզ համար չեն պատմում անցեալի
պատկերները այն սքանչելի, կախարդական
հէքիաթները: Նրանք քեզ օտար են, ան-
հասկանալի և ի զուր թպրտում ես ոսկրա-
ցած կրծքից զուրս գալ, թոչել դէպի այն
սպուպները:

Միրտ իմ, գաղարիք հառաչելուց:

Վերջ բոլոր հառաջանքներին, որոնք
կտրտում, բղկտում են քեզ անխղճօրէն,
գաղանարար:

Լուս...

Զի՞ս յիշում, հէնց այդ պատկերները պարուբեցին քեզ իրենց անհասանելի պատրանքների մէջ, ապա թռան, հեռացմն ով գիտէ ուր և զու վիրաւոր, արհաքամ մազլցում էիր այս ու այն կողմ, արտասւելու միակ միախթարանքը ունենալով:

Միտ իմ, գագարի, քեզ համար չեն այն կախարդական սքանչելի հէքիտթները, նըրանք միայն հինգ, մօռացւած վէրքերն են քրքրում ու բաց են անում նրանց բերանները:

Լուռ մնա ու մենակութեան մէջ արտասւիր, վէրքերը թող ծածկւած մնան...

ՄԻ ՕՐ

Զը գիտեմ ինչու այսօր յանկարծ պատեց ինձ սոսկալի յուսահատութիւնն ու սիրտս ճմլեց, ցաւալի գալարումներով սկըսեց տառապել և հէքը զսպած՝ հասաչել:

Ո՞վ գիտէ, գուցէ թաւիշ ձիւնի մանրիկ փաթիլներն են պատճառը, որոնք թափւելով այսօր՝ առաջին անգամ, յիշեցրին կեանքիս անցեալից մի պատկեր:

Բայց ինչու սիրտս գալարում ու կծկըւում է, չէ որ այն վաղուց, շատ վաղուց էր, երբ ես զգում էի իմ երջանկութիւնը և խե-

լայեղօրէն առաջ էի վազում, ուշ չը դարձնելով պատւարներին:

Բայց այն վաղուց անցել է:

Մի օր, աշնանը կռունկները թռան խըմբով, իւեցին ինձնից իմ երջանկութիւնն ու գնացին հեռու, անապատների լոռութեան մէջ, աւազների տակ թաղելու այն: Ու այժմ նայ իմ երջանկութիւնը երկրի անդունդներում ով գիտէ յիշում է ինձ:

Ոչ, ոչ, նա, է, տարիներ առաջ մօռացել է ինձ:

Եւ այժմ, երր կոթնած սեղանին, սենեակի մենակութեան մէջ պատուհանից նայում եմ ոլորապտոյտ ցած իջնող ձեան քնքուշ ու նուրբ փաթիլներին, կամաց կամաց զարթնում է հինը:

Չիւնը յետ է մզում խաւարը և նրա տակից դուրս է քաշում մօռացւածը:

—Թող, թող... Մի օր կռունկները առան նրան ու տարան անապատի աւազներում թաղելու:

ՎԱՐԴԵՐԸ

Ինչու թօշնան իմ վարդերը...

Ոսկիաձոյլ ծաղկամանում նրանք բող-

բոջել, ալ թերթերը բաց արած մեղմ շնչում
ու համբոյրի էին սպասում:

Ու նրանց բոյրը տարածւած՝ խնկար-
կում էր ինձ, աննիւթ մարմնի՝ մենսկու-
թեան մէջ եղած հպաման քաղցրութիւնը
զգացնելով:

Եւ անտեսանելի ու հեռու հօրիզոնները
գրաւում էին ինձ իրենց մենութեան մէջ
պարուելու:

Բայց վարդերը յանկարծ թօշնան:
Ինչու:

Զէ, որ սրտիս արիւնով ջըել, հոգուս
անհուն, վեհ ձգումներով ունացըել ու
արցունք հառաջանքներով էի օծել նրանց,
ու կոկոնները փայփայել, խնամել էի ոսկրա-
ցած կրծքիս խռոչում:

Ալ թերթերը համբոյրի էին սպասում ու
թօշնան...

Աշնան դոլուկը սպիտակ շղարշի պէս
կամացուկ իջաւ նրանց վրայ, իր ծանրու-
թեան տակ խոնարհեցը նրանց քնքուշիկ
գլխիկները:

Հոգուս ձգումները ցած գլորւեցին հըս-
կայ ժայռերից ու կորան ծովի անյատակ
խորքում, բազմացան հառաջանքներս, դա-
դարեց սիրտս ու լրւու կծկւած կրծքիս ան-

կիւնում, արտասաւեց անուսժ, աղի, ող-
բալի...

Ա՛խ, ինչու, ինչու թօշնան վարդերը,
արիւնով աճած...

Ա՛խ, ինչու թօշնան վարմիր վարդերը,
սրտիցս բռնած...

ՄԻՐԾԱ

Լեռների անուշ զավերի փնտռումից յոգ-
ած, կանգ առայ կանաչ, ոսկիայ հասկերով
ծածկւած դաշտում ու ընկայ գետին և վը-
րայիցս ծորող քրախնքը թս փւեց հողի,
փափուկ, սիրելի հողի զիրկը, մնունդ տա-
րու անթառամ ծաղիկի փոքրիկ ոստիկին:

Իսկ հեռու, հեռու արևմուտքում, այն-
տեղ՝ ուր անհասանելի է, ուր միշտ միշտ
թուչում են երազանքները՝ մերջալոյալ իր
երփներանգ գոյներն է ժայթքում ու
կրակի բոցերը ոսկեայ պսակի պէս զլիխն
փաթաթած, որպէս աներկիւղ դե, պարում
է, պարպելով իր յաղթանակի անմահ բա-
ժակը ու անվեհեր թափով յարձակում է
գէպի խաւարը, բգկտում նրան, որպէս ա-
րիւնաբրու գաղան: Բայց խաւարն էլ ան-
մահ է, շնորհիւ իր ամենազօր թալիսմանի,
նորից վերակենդանանում ու հանգմարտու վե-

հօրէն առաջ է գալիս, վերջալոյսի ճիգերը
ծաղրելով:

Եւ տանում է յաղթանակը:

Մութէ, խաւար, որպէս սիրտս, սիրտս...

Պարկում եմ թարմ, փափուկ կանաչի
վրայ ու էլոչինչ, ոչինչ չեմ տեսնում, սևէ,
սև ամեն ինչ:

Ու սառսուն է շրջում չորս կողմում:

Օ՛, սարսափելի է, սարսափելի...

— Ո՞վ է այնտեղ ձայնում տխուր,
արտաստալի, խշխշում մեղմիկ:

Ո՞վ ես, եկ, եկ ինձ մօտ, սիրտս, սիրտս
տառապում է ցաւի անագորոյն հեղնան-
քով, եկ օրօրիբ նրան քո տիտուր երգով ու
հանդատացրու այրման տառապումի տեսնչը
սրտիս ու զովացրու նրան քո արցունքնե-
րի յորդ կաթիլներով:

Ո՞վ է, դարերի վկան...

Եկ, եկ ինձ մօտ, պարուրիր ինձ քո
թևերով ու երգիր, երգիր քաղցրիկ:

Տես, շուտով լուսինն էլ կը գայ, կիշ-
նի մեղ մօտ, իր նոր գաղտնիքները մեղ
կասի ու երեքով կը սլանանք հեռու, դէպի
լեռների զով կատարները, կը թմրենք եր-
ջանկութեան բոյրով և կընիրհենք հանգիստ,
խաղաղ:

Ահա, ահա գալիս է նա կամացուկ, հան-
դարտ:

Խաւար է, անթափանձելի սև ու ոչինչ,
ոչինչ չի երեռւմ:

Ո՞վ է գալիս ինձ մօտ, դարերի վկան:

Ո՞չ... ո՞վ է, ո՞վ:

Ահա նա՝ սառը, գալարուն, պարուրեց
ինձ ու կրծում է կուրծքս, ճարճատում ու
փշրւում են չոր սոկորներս:

Օ՛, ցաւում է, ցաւում է կուրծքս, թնդ,
հեռու, հեռու...

Լուսինը պահել է, խաւար է, մութ, ո՞վ
է կրծում արինաքամ ու կմաղքացած
կուրծքս:

Վիշտը...

Վիշտը գալարուն, սառը՝ պարուրեց ինձ
ու կրծում է կուրծքս:

Օ՛, ինչնու, ինչնու է ցաւում սիրտս ու
հառաչում անյոյս...

Լուս, շուտով կը գայ լուսինը, կօրօրի
քեզ, կը երգի անուշ, գու կառողջանաս, կը
ուլանանք հեռու, երջանկութեան զիրկը, կը-
նիրհենք խաղաղ:

Ա՞հ, ով ծւաց այժմէն բար ու թպըր-
տաց, կարծես հիշայ ծովրեցում անուժ,
խղճալի:

7/11. 1922

ՎԵՐՆԱ ԽԵՂՋԻ
Ա. ԱՍՍՍ Կ. ՅԱԴՐԻ

Սիրտս, սիրտս է ծւռմ, վշտի ձեռքերում սեղմւած:

Պէտք չէ լուսինը, էլ չը գաս դռւ՝ գարերի վկայ, սիրտս այրւեց, վերջին անդամ ծւաց ու հանգաւ...

Օ՛, սիրտս, սիրտս տառապած...

Վշտի հսկայ շնչեղ սիրտս այրւեց ու նստած մոխակոյտի վրայ, արտասւում եմ...

ԵՐԱԳԱՆՔԻ

Մոայլ ու անհամբեր ձմերային ժամերը սահում են դանդաղ և վշտի, անձուկի ու տանջանքի բեռներն են զլորում վրաս:

Ցուրտ օրերը հեզնանքի թոյնը դէմքներին, նայում են ինձ, կարծես ոպառնաւով յանկարծակի մի գրոհով վերցնելու, առնելու ինձ իրենց թեերին, տանելու հեռուների անյայտ անդունդները շպրտելու, որ մենութեան մէջ արտասւեմ, հառաչեմ անվերջ:

Եւ երկար, համբաքայլ գիշերներին նստած մտածում եմ...

Երազաները պատում են ինձ, ոլացնելով այնտեղ, ուր գեղեցիկ, սփանչելի արեգակն է փայլում ուրախ ժպիտով, ուկեայ անթիւ ճառագայթները տարածած:

Եա իր ձեռքերը տարածած՝ շփում է դէմքս և կարծես ձմերային մոայլը անյետանալով, գարնան գեղեցկութիւնն է պարուրում ինձ, իր գիրկն առնելով, փայտայելով:

Տեսնում եմ այն օրերը, երբ երջանկութիւնը վեհօրէն տարւում է օդում, երբ անմահ գեղեցկութիւնն է սաւառնում ու երբ սիրտը անհուն թութիսով կամենում է գուրս թուչել վագելու նրանց ետեկից:

Ձմերային դաժան օրերը հեզնանքի թոյնը դէմքներին, սպառնում են ինձ անյայտութեան մէջ թաղելու հսկայ ժայռերի տակ. և երկար գիշերներին երազանքները ոլացնում են ինձ հեռաւ, հեռու ու թւում է թէ ես գրկած արեգակի փայլը, սաւառնում եմ օդում, երջանկութեան ժպիտը դէմքիս:

Մ Ա Հ Լ

Հեռու, հեռու...

Ո՞վ կանչեց քեդ այս մութ, դաժան գիշերին, երբ բուերն են հառաջում:
Ե՞ս...

Ո՛չ, ոչ, ցաւի ու տառապանքի այս

Խուլ գիշերին ևս չեմ կանչել քեզ հանգստացնելու եմ տանջւած, դողացող հոգին:

Օ՛, զգւելի, տաելի, տաելի... հպման ժարաւրց պապակած քո անգոյն շուրթերը դողում են ու կրքերիդ յագեցման ըովէին ևս սպասում, նստած ինձ մօտ:

Ի՞նչ է գուշակում քո ոսկրացած դէմքիդ մեղկ ժպիտը:

Սառը, խաւար փոսում, ծանր քարի տակ գալարեց, մենակութեան ու մոռացութեան մէջ արտասուեց, արտասուեց ու հառաչեց, մինչև զղւելի, սողացող որդերը կրծեն ագահօրէն ողջ մարմինը և միայն չոր ոսկրակոյալ մնայ յիշելու անցեալը, երջանկութիւնը...

Օ՛, սառսուելի ևս գուշ փափաթւած սպիտակ ծածկոցի մէջ, նստած ինձ մօտ, ձեռքերդ պարզած, գրկել ևս կամենում, որ հպես քեզ, անյայտութեան, անէութեան անդասնալի, անհետ գիրկը զորելու:

Հեռնել, հեռնել...

Ո՞վ կանչեց քեզ այս սարսափի ժամին, երբ քամին է լալազին աղերսում պատռւ հանը բանալու:

Մի, մի մօտեցիր ինձ, գալարուն որ-

գերը կուշտ են ու թմբած:

Ո՞չ ոչ, հեռնել, ևս չեմ կանչել քեզ...

ԵՐԵԿՈՅՑԵԱՆ ԵՐԳ

Գարնանային երեկոյի ծաղիկների թարմ բոյրերով օծւած մեղմ շունչն էր տարածւած խաղաղ, ոսկիապատ գաշտերի վրա:

Հեռու լեռները լուռ էին ու խորասուղւած իրենց մտորումների մէջ, ով գիտէ ինչ էին երազում մթութեան մէջ, հաղարաւոր աստղերի հայեցքների տակ:

Ու ես երեկոյեան երգն էի երգում, ցողաթաթախ յակիննթի ոստը կըծքիս:

Լուռ էր, ու ամեն ինչ՝ կանաչները, ծաղիկները, լեռներն ու նոր զարթած երկիրը անձայն իմ երգին էին ականջ դնում:

Միայն չէր լսում նա, որի համար երգում էի...

Օ՛, եկ ու լուռ լսիր իմ երգը՝ երեկոյեան չնչի ու ծաղիկների բոյրերի մէջ:

Տառապած հոգուս վերջին լարերի անուշ երգն է այդ, որ թռչում է պարուրելու քեզ իրեն գրկում:

Ե՞կ... Գարնան երեկոյի երգն է դուրս թռչում վշտու հոգուս ծալքերից:

Քարուն է... Ննջող լեռների ու դաշտերի
մէջ էլ մենակութիւն չենք զգայ ու անձուկը
չի կրծի մեր կուրծըր:

Եկ, ու խաղաղութեան մէջ լսիր իմ
գարնանային շօղով ու ծաղիկների բոյրերով
օծւած երգը... ու մթութեան մէջ ոչ ոք չի
տեսնի քո շուրթերից քաղած անուշ համ-
բոյրը:

Տառապած հոգուս վերջին երգի քնքուշ
համբոյրը:

ԳԱՐՆԱՐ

Եկաւ գարունը անուշ բոյրելով ու ծաղ-
կեցին ծառերը, զարթնումի կոչը երգերով:

Լսեց այդ կոչը սիրաը ու վաղեց պա-
րուբեկու գեղգեղուն երդի ձայնին, գեղեց-
կութիւնն ընդգրկելով, որը հիւսւած սիրոյ
նուրը ու քնքուշ լարերից, տարածւում ու
անյետանում էր հեռու լեռների պաղցուա
գրկերում:

Եւ սիրտը թմրութեան թանձր քողը
պատսելով, կանգնեց կարող, նոր, թարմ
ուժերով ընդասաջ վաղեց անուշ գարունին,
բորբոքւած սիրոյ փայլը տոկայծելով:

Դիշեր էր կուսընկան ու աստղերը իրենց

խորհրդաւոր լոութեամբ, ժպտուն աչքերով
գեղեցկութեան քողն էին տարածել երկնա-
կամարում, խնկարկւած հազարաւոր ծաղիկ-
ների արբեցուցիչ շունչով և կոյսի չքնա-
զութիւնն ու գեղեցկութիւնն էին երգում.
Գեղեցկութիւնը կոյսի, որ ձմբան անձուկից
ու տիրութիւնից, կանաչ սլսակը գլխին դուրս
եկաւ ջերմութիւնը ցանելու թմրած սրտե-
րում:

Նա իր սկ աչքերի այրով հայեացքով և
կապկապող ժպիտով, զարնան պէսպիսի
գոյներով զարգարւած, եկաւ խորտակելու
սրտի կապանքները, հալեցնելու նրա վրայ
շերտաւորւած սառոյցը, ակատ թոփչքի ու
համարձակ ձգտումների ոգեսրութիւնը ներ-
շնչելով իր շնչի անուշ հպմամբ:

Կոյսը աննիւթ, ծիածանի գոյները գըլ-
խին եկաւ սրտերը զարթեցնելու և կեանքի
քալցրութեան ու երջանկութեան պատմու-
թիւնն անելու իր հուր շուրթերով:

Սիրոյ տառապանքը մենակութեան մէջ,
ցնորքների, երազների ընկերակցութեամբ,
ահա կեանքի քաղցրութիւնը...

Մէր... Սրտի գտլարումները սիրոյ տան-
ջանքի ու տիրութեան սեղմումներից, ահա
երջանկութիւնը, որը պայծառ գիշերներին

դալիս պարուրում է հոգին, կեանքի քաղցրութիւնը աւետելով:

Եւ զընդում է հոգին ու նորից ապօկուց յնորքն է մտմտում:

Քարնան գեղեցկութիւնը զգեցած, և կաւաննիւթ կոյսի, սիրոյ աւետումը ու աչքերում և կեանքի քաղցրութեան անուշ երդը հուր շուրթերում:

I Ո Ւ Թ

Ինչու խաւարի մէջ սարսափի երգն ևս երգում յուսահատ:

Լնու, ու նայիր սրտիս, ինչպէս ու է, տանջանքից կծկւած, արնաքամ, վիրաւոր: Ու լսիր ինչպէս նա հառաչում է աղի, կանաչներն օծելով արցունքով, դիշերայ խաւարի լայն գրկում:

Ոչ մի ձայն ու շշուկ չէ լւում, մայր հողը թմբել է խաղաղ, ծառերը դարաւոր և մատաղ կանգնել են անձայն ու անշարժ:

Մենակութիւնն էլ սիրտս հառաչում է անուժ:

—Ուր է, սւր է նա, ինչու չի գալիս...

Աստղերը գրաւեցին նրան իրենց գիր-

կը յաւիտենական կեանքի ու երջանկութեան խոստումը տալով:

Ահա այնտեղ՝ աստղերի անհամար բազմութեան մէջ կանգնած է նա, սպիտակ շղարշեայ հագուստով, անուշաբոյր, ոսկեայ մազերի փունջը թիկունքին ցրած ժպտում է անուշ ժպիտով, իր խորունկ աչերով տիեզերքը լուսաւորելով:

—Վայ, վայ, վայ...

Ինչու հս ճչում այդպէս յուսարեկ, նըստած կեանքիս աւերակների վրայ ու սոսկումի երգը երգում:

Լնու ու նայիր սրտիս, ինչպէս սկը է նա, արնաքամ:

Ինչպէս ճնշւմն է նա սիրոյ տանջանքների բեռների տակ:

Օ՛, սիրել ու տանջել անվերջ, անվերջ...

Ի Ն Զ Ո Ւ Թ

Ինչու երկինքը պարզ, անամպ, նայում է ինձ իր հրապուրիչ աչքերով ու լուսնական իր բարձունքից, տիուր շուրթերին ժպիտ է քայլեցնում և խօրամանկօրէն կանչում է ինձ իր մօտ:

ինչու ծաղիկների բազմութիւնը իրենց
անուշ բոյրերով շրջապատում են ինձ ու
հրաւիրում սիրող կրծքի համար փունջ
պատրաստելու և պարտէղի ծառերը սքան-
չելի հէքեաթներ են պատմում ինձ:

Ոսկի, անմահ հէքեաթներ...

Երջանկութեան աստղիկը ինչու ինձ իր
գիրկն է կամենում առնել, երբ կրծքիս տակ
ընդ միշտ դատարկութիւնն է տիրում:
Սիրտս պոկւեց, գլորւեց գէպի ցած, հոկայ
անդունդը ու զարնւելով ապառաժներին
փշուր-փշուր ահա ընկած է այնտեղ յատա-
կում:

Ինչու ապրումի բերկութիւնը իր ոս-
կեայ ծիրանին է տարածել, փաթաթելու
ինձ:

Չէ, չէ, սիրտս փշուած, խորտակւած պառ-
կած է անդունդի յատակումու կրծքիս տակ
դատարկ տարածութիւնն է, որ անզուսպ,
անմիթար հառաջում է, հառաջում...

Այն ժամանակ՝ երբ նա ձեռքերը պար-
զած, կամենում էր թուչել վեր, ուրուրի մի
անգորոյն հարւածով պոկւեց ու գլորւեց
անդունդը:

Չէ, չէ, պէտք չեն ինձ ծաղկանց բուր-

մունքը, լուսընկայի անուշ ժպիտը ու ան-
տառի սոկեայ հէքեաթները...

Սիրտս դստարկ է ու հառաջում է լոկ...

Ժ Պ Տ Ա

Երբ սպիտակ մահը իր քնքուշ թեհրի
հպումով յաւիտենապկս կը փակէ աչքերս,
երբ կը հանգչի վերջին լոյսը ու ես պառ-
կած կը լինեմ հողաթմբի տակ և կը գաս
իմ թարմ շիրմի մօտ քո վերջին հրաժեշտը
տալու, գու մի արտասւիր:

Արցունք մի թափիր իմ շիրմի վրայ,
ոչ հառաջիր խաղաղութեան մէջ:

Իմ տանջանքի ու սպասումի տառա-
պանքների մէջ, մինչ վերջին ժամը ժպում
էի ես, չէի արտասւում:

Ու զու եկ մէսնիկ, լուսնեակ զիշերին իմ
թարմ թմբի մօտ, կանգնիր երկար, երկար
ու ժպտա քո անուշ ժպիտով:

Խոստացիր այդ ինձ...

Ո՛չ, աչ, չարտասւեսո... Քո արցունքները
մայր հողի միջից ինձ վրայ կընկնեն ու
կայրին սիրտա:

Օ՛, սիրտս կայրուի քո տառապանքից:

ինչու արտասւել, երբ ես ժպտացի վերջին
վայրենին:

Դու էլ եկ, կանգնիր իմ թարմ շիրմին
ու երկար ժպտա քնքուշ ժպիտով...

Ն Ն Զ Ի Ր

Ննջիր...

Հանգիստ ու խաղաղ ննջիր յաւիտենա-
պէս:

Փաթաթւիր խոնաւ, դուրալի վերմակի
մէջ մեղմ, օրօրւող և անուշ երգող ուռենի-
ների տակ ու ննջիր:

Պէտք չեն դափնեայ պսակներ...

Որպէս սուր փշեր, նրանք պատառո-
տում են քնքուշ, խոնուն ճակատը և ծակ-
ծակում սիրտը թպրտացող...

Սուտ է...

Կեանքի անգորրութիւնը ընդգրկիր զար-
նան գիշերի խաղաղութեան մէջ, մեղմ լու-
սընկայի ժպտուն հայեացքի տակ ու ննջիր
ծաղիկների բոյրով արբած:

Թող չը գալարւի քո սիրտը անյուսու-
թեան մէջ ու խոկումները թող չը շրջապա-
տեն նրան:

Տանջանք-տառապահքները թող չը տա-
րածեն իրենց ոսկրոտ, անձունի ձեռքերը
գրկելու քեզ, սիմելու իրենց բաղուկնե-
րում:

Այս ժամանակ արնաքամ, ոսկրացած,
որպէս ուրւական, թափառումի ու աղի
հառաչանքի ստուերները կը քշեն քեզ ան-
վերջ...

Հեռն...

Անձուկն ու անյուսութիւնն է տիրում,
ու թող քո հոգին չը պարուրւի նրանց մէջ:

Ննջիր խաղաղ ու անհոգ, զարնան գի-
շերի անուշ զեփիւով փայփայւած ու թող
քո հոգին չը զգայ ոչինչ, ոչինչ...

ԹԱՂՈՒՄՆ

Զանգակները զօղանջում էին մեղմ, ալ-
խուրը...

Լուս էր, ու այդ սրտմաշուկ զօղանջն էր
միայն տարածւում շրջակայքում. զնում
հեռն, դէպի անհունը, ու մեռնում:

Զանգակները տխուր զօղանջում ու ար-
ցունքոտ աչքերով թաղումի երգն էին. եր-
գում:

Ու վշտի, տառապանքի այդ աղեկտուր
հառաջները պլարուրում էին սիրտը և խոցու-
րում նրան՝ որպէս առւր տաեղներ:

Եւ արիւնոտ սիրտը ընկած ողբում էր
իր բերկութեան, իր անհուն երջանկութեան
անդառնալի կորուստը:

Ու այսօր, այս պայծառ ու խաղաղ ա-
ռաւօտ, նրա թաղումն էր, և անյագ հողը
բացած երախը սպասում էր...

Օ՛, անդարձ կորուստը երջանկութեան,
սրտի յաւիտենական բաժանումը...

Ա՛խ, սարսափելի է, սոսկալի...

Զը կայ, էլ չը կայ նա, նա, որի միայն
հայեացը անմահութեան դրախտի գաներն
էր բացանում սրտի առաջ:

Այսօր նրա թաղումն էր ու զանգակների
մելամաղձոտ զղանջիւնից զարթած բնու-
թիւնը ծունկի իջաւ նրա զագաղի առաջ,
իր վերջին հրաժեշտը տալու:

Ու կարմիր, փարթամ վարդը, մեխակը,
շուշանը, անմոռնուկը սիրով փաթաթուած,
զրկած միմեանց, պարուրել են նրա խոհե-
րով լի ճակսուը յաւիտենական կեանքի
պատկով, իսկ լացող ուռենին խոնարհուած
նրա թարմ թմրին կամացուկ արցունք է
թափում ու զովիկ զեփիւոից օրօրւելով:

յաւիտենական նինջի երգն է մըմնջում:
Ու սիրտը, արիւնոտւած, վիրաւոր սիրտը,
ընկած՝ խոնաւ շիրմին, լուռ, անձայն հա-
ռաչընում է, հառաչընում, հառաչընում:

ԿԲ ՅԱՂԹԵՆ

Կեանքի յորձանուտի մէջ առաջ էր սո-
զում հսկայ ամբոխը, շաղախւած ցեխի, հո-
ղի հետ, միմեանց հրելով, քաշքշելով: Եւ
ապրելու համար իւրաքանչիւրը ենթարկ-
ւում էր անխուսափելի կուր ու նրանք թա-
փում էին միմեանց արթիւնը, ջախջախում
մէկ-մէկու գլուխ ու թաղում հոտած ճահճի
խորքում:

Ես անցայ նրանց մօտով ու լուռ ար-
համարհանք էր երեսում իմ գէմքիս ու շատ-
պում էի որքան կարելի է շուտ հեռանալ,
որ նրանց վրայ շերտաւորուած կեղտը ինձ
վրայ չընստէր:

Ու երբ շտապ անցնում էի, նրանք թափ-
եցին վրաս ու սկսեցին քաշքշել ինձ, ցած
գլորելու, որպէսզի ես էլ միանամ նրանց
ու միասին, նոր, թարմացած ուժերով, ևս
էլ նրանց հետ, սողանք:

Ես աշխատում էի ազատել, իմ արհամարհանքի թոյնը թափւեց նրանց վրայ և շատերը փախան նրանցից, բայց միւս ները տես քարշում էին ինձ:

Ու երբ հաւաքած ամբողջ ուժերս պատրաստում էի թոյնի մի ամբողջ տարափ թափելու նրանց բոլորի վրայ, չգիտեմ ո՞վ, անշառկ մօտեցաւ ինձ ու շշնջաց.

—Նրանք շատ են, կը յաղթեն...



«Ազգային գրադարան»



NL0370118

ՊԱՏՐԱՍ ԵՆ ՏՊԱԳՐԱԿԹԵԱՆ ՀԱՄԱՐ
ՀԵՏԵԼԵԱԼ ԱՇԽԱՏՈՒԹԻՒՆՆԵՐԸ

ա) ինքնուրոյի.

- | | |
|------------------|------------|
| 1) ՏԱՆՉԱՆՅԻ ԱՋԵՐ | ր. տետրակ. |
| 2) ՎՃՏԻ ՀԱԹԱՉՆԵՐ | մ. դիրք. |
| 3) ՎՃՏԻ ՀԱԹԱՉՆԵՐ | ր. դիրք. |

բ) թարգմանական.

- | | |
|---|--|
| 1) Մտ. ՊԵՂԵԲՈՂԵԱԿԻ. ԱՐՑՈՒՆՅԻ ՀՈՎ-
ՏՈՒՄ, պօչմա. | |
| 2) ԼԵԶԻՒ ԱՆՈՒՔԵԼ. ՄԵՐ ԿԵԱՆՅԻ ՕՐԵՐԸ | |
| պիէս 4 գործողութեամբ. | |

Հրատարակել ցանկացողները թող դիմեն
հեղինակին:

Գիշե է 15 ԿՕՊ.

ԳՐԱԿՐՈ ԿԱՐԵԼԻ Է ԱՄԱՆԱԼ

Тифлисъ, книж. маг. „Гуттенбергъ“
Ордубатъ. Аршалуйсу Теръ-Овнанъянъ.